



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2022-29.07/285
29.07.2022 թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Էդվարդ Հովհաննիսյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե ՀՀ կառավարության 2013 թ. հուլիսի 25-ի N 796-Ն որոշմամբ սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերի (կազմակերպությունների) ցանկում ներառված և ՀՀ Արմավիրի մարզպետարանի վերահսկողության ներքո գտնվող վայրերում ներկա դրությամբ քանի հոգի է անցնում այլընտրանքային աշխատանքային ծառայություն:

Միաժամանակ խնդրում եմ տեղեկությունները տրամադրել **ըստ յուրաքանչյուր հաստատության:**

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց 5-օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կազմակերպության նախագահ՝

Կատարող՝ Ա. Սադիկյան
Էլ-փոստ՝ asadikyan@hcav.am



Արթուր Սաքունց